~~ՆԱԽԱԳԻԾ~~

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-256-06.05.2022-ՏՀ-0110

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 9-րդ հոդվածի 4-րդ մասում «կարգավորումները» բառից հետո լրացնել «, բացառությամբ Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման,» բառերը:

~~**Հոդված 1.**~~**Հոդված 2.** Օրենսգրքի 202-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ռոյալթիի հաշվարկման նպատակով կիրառվում են հետևյալ հարկման բազաները.

1) $Բ_1$ - հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի (այսուհետ՝ սույն բաժնում խտանյութի հետ միասին՝ արտադրանք) իրացման շրջանառություն.

2) $Բ_2$ - շահույթ նախքան հարկումը, որը հաշվարկվում է որպես $Բ_1$-ի և Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված՝ $Բ_1$-ի հետ անմիջականորեն կապված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն.

3) $Բ_3$ - շահույթ նախքան հարկումը, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով. Ընդ որում, $Բ_3$-ի հիման վրա ռոյալթիի գումարը հաշվարկվում է միայն այն դեպքում, երբ ռոյալթի վճարողի մոտ $Բ_3$-ը մեծ է 0-ից.

$$Բ_3 = Բ_2 - ՖԾ - (Բ_1 \times R_1) - (Բ_2 \times R_2) - (Բ_1 \times 0.1)$$

ՖԾ - Օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով հաշվարկված ֆինանսական ծախսեր, որոնք $Բ_3$ -ի հաշվարկման նպատակով հաշվի են առնվում՝

- եթե փոխառու ռոյալթի վճարողը համարվում է ցուցակված Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսայում, և փոխառությունը ներգրավվում է փոխկապակցված չհամարվող փոխատուից,

- եթե փոխատու ֆինանսական կազմակերպությունը փոխկապակցված չէ փոխառուի հետ և փոխատու ֆինանսական կազմակերպությունը համարվում է ցուցակված Կառավարության ~~սահմանած~~սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսայում կամ փոխատուն ընդգրկված է ~~Կառավարության~~Կառավարության սահմանած՝ միջազգային զարգացման կազմակերպությունների ցանկում:

Սույն պարբերությամբ նախատեսված դեպքերում $Բ_3$-ի հաշվարկման նպատակով ֆինանսական ծախսերը հաշվի են առնվում փոխառուի կամ փոխատուի՝ ցուցակված լինելու ժամանակահատվածի՝ հաշվետու տարվա մեջ ունեցած տեսակարար կշռին համապատասխանող չափով:

R_1 և R_2 –ը Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված ռոյալթիի դրույքաչափեր են:

Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ $Բ_2$-ի հաշվարկման ժամանակ՝

1) իրացման շրջանառությունից ֆինանսական ծախսերի, սույն բաժնով սահմանված ռոյալթիի և նախորդ տարիների հարկային վնասների նվազեցումը չի կատարվում՝ անկախ այդ ծախսերն ու հարկային վնասները հանքավայրերի շահագործման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության հետ կապված լինելու հանգամանքից.

2) բնօգտագործման վճար վճարողի վարչական ծախսերի, իրացման ծախսերի և ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի նվազեցումները հաշվի են առնվում համախառն եկամտի մեջ ռոյալթիի իրացման շրջանառությանը համապատասխանող տեսակարար կշռով:»,

2) 3-րդ մասի՝

1) 2-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Խտանյութի մատակարարման պայմանագրում գնորոշման համար խտանյութի մատակարարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամիսը ներառյալ ժամանակահատվածից ավելի երկար ժամանակահատված նախատեսված լինելու դեպքում մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալի գինը հաշվարկելու համար հիմք են ընդունվում խտանյութի մատակարարման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա համար ձևավորված՝ մետաղների միջազգային միջին գները.»,

2) 3-րդ կետի «գ» ենթակետում «20» և «80» թվերը փոխարինել համապատասխանաբար «15» և «85» թվերով:

~~Հոդված 2.~~Հոդված 3. Օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ռոյալթիի բազաների համար սահմանվում են ռոյալթիի հետևյալ դրույքաչափերը.

1) $Բ_1$-ի համար R_1, որը հավասար է 4 տոկոսի,

2) $Բ_2$-ի համար R_2, որը հավասար է 12.5 տոկոսի,

3) $Բ_3$-ի համար R_3, որը հավասար է 15 տոկոսի:»:

~~Հոդված 3.~~Հոդված 4. Օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասում «ռոյալթիի բազայի և Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող դրույքաչափի հիման վրա» բառերը փոխարինել «Օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ռոյալթիի բազաների և Օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերի արտադրյալով հաշվարկված գումարների հանրագումարով» բառերով:

~~Հոդված 4.~~Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից: